ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն	
Համար	N 249-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (01.04.2026-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2026.03.02-2026.03.15 Պաշտոնական հրապարակման օրը 06.03.2026
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	05.03.2026
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	06.03.2026
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.04.2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2026 թվականի N 249-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.4-րդ կետով.

«2.4. Սահմանել, որ էլեկտրամոբիլների պետական գրանցման ժամանակ դրանց շարժիչի հզորությունը նշվում է՝ հիմք ընդունելով՝

1) էլեկտրոնային անձնագրեր ձևակերպելու լիազորություն ունեցող մարմինների կամ կազմակերպությունների կողմից տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի և ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգի ադմինիստրատորի էլեկտրոնային շտեմարան մուտքագրված տեղեկատվությունը.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատվության բացակայության դեպքում՝ հետևյալ կերպ որոշված արժեքը՝

ա. մինչև ներառյալ 250 ձիաուժ առավելագույն (պիկային) հզորության դեպքում՝ տվյալ տրանսպորտային միջոցի պիկային հզորության և 1.5 գործակցի քանորդը,

բ. 251 կամ ավելի ձիաուժ առավելագույն (պիկային) հզորության դեպքում՝ 250 ձիաուժի ու 1.5 գործակցի քանորդի և 250 ձիաուժը գերազանցող ձիաուժերի ու 2.5 գործակցի քանորդի գումարը։»։

2. Սահմանել, որ՝

1) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գրանցված էլեկտրամոբիլների շարժիչի հզորության արժեքի վերաբերյալ տրանսպորտային միջոցների հաշվառման էլեկտրոնային ռեգիստրում և թվային հաշվառման վկայագրում առկա տեղեկությունն ինքնաշխատ եղանակով փոփոխվում է սույն որոշման 1-ին կետով լրացվող 2.4-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ստացված տեղեկությամբ՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը գրանցված էլեկտրամոբիլների պարագայում՝ 2026 թվականի հունվարի 1-ից, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գրանցված էլեկտրամոբիլների պարագայում՝ էլեկտրամոբիլի գրանցման օրվան հաջորդող ամսվա 1-ից.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ տեղեկությունների փոփոխության վերաբերյալ սեփականատերերը տեղեկացվում են տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակի իրենց անձնական էջում արտացոլելու եղանակով, իսկ առկայության դեպքում՝ նաև իրենց կողմից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը տրամադրված էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրությամբ ստանալու միջոցով.

3) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ փոփոխված տեղեկություններն ինքնաշխատ եղանակով ուղարկվում են (հասանելի են դարձվում) տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից և գործում է մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

06.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 6 մարտի 2026 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀայաստանիՀանրապետությանկառավարության2010 թվականի սեպտեմբերի9-ի N 1251-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀկառավարությանորոշմաննախագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունումտրանսպորտային միջոցների գրանցման գործընթացի լավարկման, այն հանրային պահանջարկին և տեխնոլոգիականզարգացումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Այսպես,ՀՀ ՆԳՆ-ն հանդիսանում է տրանսպորտային միջոցների գրանցում և կադաստր վարող լիազոր մարմին և այդ գործընթացում տրանսպորտային միջոցների տվյալները (այդ թվում՝ շարժիչի հզորությունը) հավաքագրում է անձի կողմից ներկայացված տվյալների և տեղեկությունների հիման վրա՝ չունենալով տրանսպորտային միջոցի շարժիչի հզորությունը որոշելու լիազորություն:

ՀՀ կառավարության 2010 թվականիսեպտեմբերի9-ի թիվ 1251-Ն որոշմամբ հաստատված N 4-րդ և N 5-րդ հավելվածների 1-ին կետերի 5-րդ ենթակետերի համաձայն՝ տրանսպորտային միջոցը գրանցելու դեպքում, ի թիվս այլ փաստաթղթերի, լիազոր մարմին է ներկայացվում տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, **եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել** տրանսպորտայինմիջոցի **շարժիչի հզորությունը:** Իսկ այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի թափքի և (կամ) ամրաշրջանակի վրա փակցված նույնականացման պիտակների վրա նշված է լինում տրանսպորտային միջոցի շարժիչի հզորությունը, ապա հիմք է ընդունվում այդ տվյալը:

Ներկայումս ՀՀ-ում գրանցվողէլեկտրամոբիլի էլեկտրաշարժիչի հզորության պարզումը դարձել է խնդրահարույց, քանի որ ՀՀ ներմուծվող էլեկտրամոբիլների զգալի մասի թափքի և (կամ) ամրաշրջանակի վրա կա՛մ առհասարակ բացակայում է նույնականացման պիտակը, կա՛մ փակցված լինելու դեպքում՝ բացակայում է էլեկտրաշարժիչի հզորության մասին նշումը, կա՛մէլեկտրաշարժիչի հզորության մասին առկա է լինում երկու արժեք՝ առավելագույն և նվազագույն հզորության:

Նկարագրված իրավիճակը քաղաքացիների համար բացասական ազդեցություն է ունենում փոխադրամիջոցի գույքահարկի տարեկան վճարման տեսանկյունից:

Միաժամանակ,ՀՀ-ն լինելով ԵԱՏՄ անդամ, միացել է նաև «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ, «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 1853-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1041-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն	
Համար	N 1251-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (01.04.2026-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2010.10.06/48(782) Հոդ.1113
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	09.09.2010
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	29.09.2010
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	16.10.2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 սեպտեմբերի 2010 թվականի N 1251-Ն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ, «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 1853-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1041-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 19.03.14 N 343-Ն, փոփ. 23.02.17 N 177-Ն)

Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» և «ժբ» կետերի, 13-րդ հոդվածի 1-ին և 24-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(Նախաբանը փոփ. 19.03.14 N 343-Ն)

1. Սահմանել՝

1) պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) միաժամանակ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնելու համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) տրանսպորտային միջոցի հաշվառման ազգային վկայագրի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող և (կամ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից (ժամանակավոր) ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 11 հավելվածի.

12) տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած օպերատորի կողմից տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի փոխարեն նոր վկայականի, տրանսպորտային միջոցի կորած հաշվառման վկայագրի փոխարեն նոր վկայագրի, ինչպես նաև մաշված հաշվառման վկայագրի փոխանակման, մաշված, անընթեռնելի դարձած հաշվառման համարանիշերի փոխարեն նոր համարանիշերի հատկացման, տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագրի հատկացման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային

հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարելու կարգը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում տրանսպորտային միջոցի օտարման հասարակ գրավոր գործարք կատարելու և դրանից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու կարգը՝ համաձայն N 15 հավելվածի.

16) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում տրանսպորտային միջոցի օտարման հասարակ գրավոր գործարք կատարելու և դրանից ծագող սեփականության իրավունքի միաժամանակ պետական գրանցում և պետական հաշվառում կատարելու կարգը՝ համաձայն N 16 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 19.03.14 N 343-Ն, 24.11.16 N 1218-Ն, փոփ. 23.02.17 N 177-Ն, լրաց. 25.02.21 N 263-Ն, 30.09.21 N 1632-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն, խմբ., լրաց. 08.05.25 N 570-Ն)

2. Սահմանել, որ եթե «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և սույն որոշմամբ սահմանված տրանսպորտային միջոցների պետական հաշվառման գործողությունները կատարվում են միաժամանակ, ապա դրանք իրականացվում են որպես մեկ միասնական գործողություն, որի դեպքում ներկայացվում են սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված ցանկով նախատեսված փաստաթղթերը:

2.1. Սահմանել, որ՝

1) տրանսպորտային միջոցի պետական գրանցման և պետական հաշվառման ժամանակ տրանսպորտային միջոցի թողարկման տարեթիվը որոշելիս տրանսպորտային միջոցն արտադրողի կողմից տրանսպորտային միջոցի թափքի և (կամ) ամրաշրջանակի վրա փակցված նույնականացման պիտակների վրա նշված՝ թողարկման տարեթվի վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում հիմք է ընդունվում այդ տեղեկատվությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տեղեկատվության բացակայության դեպքում՝ տրանսպորտային միջոցի նույնականացման համարի 10-րդ նիշին համապատասխանող տարեթվի վերաբերյալ տեղեկատվությունը (տեղեկատվություն տրանսպորտային միջոցի թողարկման (մոդելային) տարեթվի վերաբերյալ), իսկ այդ տարեթիվը գրանցման (հաշվառման) ներկայացված տարեթվից բարձր լինելու պարագայում, որպես թողարկման տարեթիվ է նշվում պետական գրանցման ներկայացման տարեթիվը:

(2.1-ին կետը լրաց. 25.02.21 N 263-Ն)

2.2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ պետական գրանցման և (կամ) պետական հաշվառման ենթակա (բացառությամբ Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված) տրանսպորտային միջոցների պետական գրանցման և (կամ) պետական հաշվառման գործողություններ կատարելու համար տրանսպորտային միջոցը և մաքսային հայտարարագիրը չեն ներկայացվում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, եթե տրանսպորտային միջոցի պետական գրանցման և (կամ) պետական հաշվառման գործողություններ կատարելիս տրանսպորտային միջոցի մաքսային ձևակերպում իրականացնող մաքսային մարմնից առցանց եղանակով ստացվում են տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագիրը և տրանսպորտային միջոցի զննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը, և եթե այն պարունակում է տրանսպորտային միջոցի պետական գրանցման և (կամ) պետական հաշվառման համար անհրաժեշտ և բավարար տվյալներ: Մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի զննության արդյունքում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը փոխանցվող տվյալների ցանկը և այդ տվյալների փոխանցման ընթացակարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով:

(2.2-րդ կետը լրաց. 02.06.22 N 783-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

2.3. Սույն որոշման 2.2-րդ կետով նախատեսված դեպքում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում տրանսպորտային միջոցի պետական գրանցման և (կամ) պետական հաշվառման գործողություններ կատարելիս հիմք են ընդունվում մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի զննության արդյունքները:

(2.3-րդ կետը լրաց. 02.06.22 N 783-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

2.4. Սահմանել, որ էլեկտրամոբիլների պետական գրանցման ժամանակ դրանց շարժիչի հզորությունը նշվում է՝ հիմք ընդունելով՝

1) էլեկտրոնային անձնագրեր ձևակերպելու լիազորություն ունեցող մարմինների կամ կազմակերպությունների կողմից տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի և ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգի ադմինիստրատորի էլեկտրոնային շտեմարան մուտքագրված տեղեկատվությունը.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատվության բացակայության դեպքում՝ հետևյալ կերպ որոշված արժեքը՝

ա. մինչև ներառյալ 250 ձիաուժ առավելագույն (պիկային) հզորության դեպքում՝ տվյալ տրանսպորտային միջոցի պիկային հզորության և 1.5 գործակցի քանորդը,

բ. 251 կամ ավելի ձիաուժ առավելագույն (պիկային) հզորության դեպքում՝ 250 ձիաուժի ու 1.5 գործակցի քանորդի և 250 ձիաուժը գերազանցող ձիաուժերի ու 2.5 գործակցի քանորդի

գումարը:

(2.4-րդ կետը լրաց. 05.03.26 N 249-Ն)

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ սահմանված կարգով չհաշվառվելու (միայն տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցվելու), տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև խոտանման հիմքով տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու դեպքում համապատասխան տրանսպորտային միջոցը համարվում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով պետական հաշվառումից հանված (չհաշվառված).

2) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցելու, սակայն չհաշվառելու դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրանսպորտային միջոցը կայանման վայր տեղափոխելու համար տրվում են մեկօրյա ժամկետով «ժամանակավոր» համարանիշեր.

3) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված, սակայն չհաշվառված տրանսպորտային միջոցը պետական գրանցումից հանելու կամ հաշվառման ներկայացնելու նպատակով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրանսպորտային միջոցը կայանման վայրից տեղափոխելու համար տրվում են մեկօրյա ժամկետով «ժամանակավոր» համարանիշեր:

(3-րդ կետը խմբ. 21.04.11 N 618-Ն, փոփ. 15.03.12 N 306-Ն, 26.09.19 N 1335-Ն)

3.1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները, տրանսպորտային միջոցի պետական գրանցման և պետական հաշվառման գործողություններ կատարելիս, տվյալ գործողության կատարմանը նախորդող ժամանակահատվածի համար ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի կամ կտրոնի առկայությունը չեն ստուգում:

(3.1-ին կետը լրաց. 15.03.12 N 306-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

3.2. Սահմանել, որ՝

1) որոշման N 11 հավելվածում նշված՝ 11-րդ և 12-րդ տեսակների հաշվառման համարանիշերը հատկացվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից.

2) որոշման N 11 հավելվածում նշված՝ 22-րդ, 22.1-ին, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29.2-րդ և 29.3-րդ տեսակների հաշվառման համարանիշերը հատկացվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից.

3) որոշման N 11 հավելվածում նշված մյուս տեսակների հաշվառման համարանիշերը հատկացվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից, բացառությամբ որոշման N 11 հավելվածում նշված՝ 30-րդ, 30.1-ին և 32-րդ տեսակների հաշվառման համարանիշերի, որոնք կարող են հատկացվել նաև տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և մաքսային մարմինների կողմից:

4) ***(ենթակետն ուժը կորցրել է 12.04.24 N 503-Ն)***

(3.2-րդ կետը լրաց. 19.03.14 N 343-Ն, փոփ. 11.05.18 N 569-Ն, լրաց. 29.08.19 N 1133-Ն, փոփ. 26.09.19 N 1335-Ն, լրաց. 24.08.22 N 1321-Ն, փոփ. 01.12.22 N 1834-Ն, 12.04.24 N 503-Ն, 05.09.24 N 1419-Ն)

3.3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին պատկանող հափշտակված տրանսպորտային միջոցները՝ հետախուզում հայտարարվելու դեպքում սահմանված կարգով ժամանակավոր (մինչև հայտնաբերումը) դուրս են գրվում տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ կազմակերպության հաշվեկշռից:

(3.3-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն)

3.4. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները, տրանսպորտային միջոցի պետական գրանցման և պետական հաշվառման գործողություններ կատարելիս, փոխադրամիջոցի (տրանսպորտային միջոցի) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը հավաստող փաստաթուղթ չեն պահանջում, եթե տրանսպորտային միջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է էլեկտրոնային առցանց եղանակով:

(3.4-րդ կետը լրաց. 10.03.22 N 308-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

3.5. Սահմանել, որ՝

1) սույն որոշման իմաստով հաշվառման վկայագիր է հանդիսանում նաև դրա թվային տարբերակը (թվային հաշվառման վկայագիր), որը սույն որոշմամբ սահմանված N 7 հավելվածով նկարագրված հաշվառման վկայագրի փոխարեն կամ այն տրամադրելու հետ միաժամանակ հասանելի է դարձվում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը.

2) թվային հաշվառման վկայագիրը հասանելի է Հայաստանի Հանրապետության ներքին

գործերի նախարարության պաշտոնական կայքում նույնականացման քարտի (ID) կամ բջջային նույնականացման քարտի (Mobile ID) միջոցով (խիստ նույնականացում)՝ «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակում նույնականացում անցնելուց հետո կամ ծառայությունների մատուցման համար ստեղծված պետական բջջային հավելվածի միջոցով.

3) միայն թվային հաշվառման վկայագիր ունեցող տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական գործառույթ իրականացնող տարածքային ցանկացած ստորաբաժանումից ստանալ սույն որոշման N 7 հավելվածին համապատասխան հաշվառման վկայագիր.

4) տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության ժամանակ միայն թվային հաշվառման վկայագիր ստանալու ցանկություն հայտնելու դեպքում տպագրման սրահում հաշվառման վկայագրի տպագրման պատվեր չի տրվում, իսկ տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության ժամանակ հաշվառման վկայագիրը ներկայացնելու պահանջը չի տարածվում միայն թվային հաշվառման վկայագիր ունեցող անձանց վրա։

(3.5-րդ կետը լրաց. 08.05.25 N 570-Ն)

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում հաստատել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգի 11-րդ կետով, 12-րդ կետի 7-րդ ենթակետով, 16-րդ կետի 7-րդ ենթակետով, 20-րդ և 24-րդ կետերով, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետով սահմանված կարգի 8-րդ և 13-րդ կետերով նախատեսված վարչական ակտի, մատյանների, հաշվառման քարտի և տեղեկանքների ձևերը։

(4-րդ կետը փոփ. 26.09.19 N 1335-Ն)

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1853-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերն ու 2007 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետություն ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցներին հաշվառման փաստաթղթեր և հաշվառման համարանիշեր չտրամադրելու դեպքերը սահմանելու մասին» N 1041-Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

7. Սույն որոշմամբ սահմանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող կտրոն ներկայացնելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

8. ***(կետն ուժը կորցրել է 15.03.12 N 306-Ն)***

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2010 թ. սեպտեմբերի 29
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Պետական գրանցման ենթակա են Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված՝

1) 50 սմ³-ից ավելի բանվորական ծավալով շարժիչ ունեցող և 50 կմ/ժ-ից ավելի առավելագույն արագություն զարգացնող կամ 0.25 կՎտ-ից ավելի հզորությամբ էլեկտրական շարժիչ ունեցող և 25 կմ/ժ-ից ավելի առավելագույն արագություն զարգացնող՝

ա. մոտոցիկլները,

ա1. տրիցիկլերը և քվադրիցիկլները,

բ. թեթև մարդատար ավտոմոբիլները,

գ. բեռնատար ավտոմոբիլները,

դ. ավտոբուսները.

1.1) մոպեդները.

2) սույն կետի 1-ին և 1.1-ին ենթակետերով նշված տրանսպորտային միջոցների կցորդները (կիսակցորդները):

(1-ին կետը լրաց. 21.04.11 N 618-Ն, փոփ. 23.02.17 N 177-Ն, փոփ., լրաց. 25.02.21 N 263-Ն, փոփ. 06.11.25 N 1565-Ն)

1.1. ***(կետն ուժը կորցրել է 26.09.19 N 1335-Ն)***

2. Սույն ցանկի 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցներից բացառություն են կազմում (չեն գրանցվում)՝

1) մրցարշավային տրանսպորտային միջոցները.

2) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից դուրս՝ փակ տարածքներում շահագործվող, ինչպես նաև տրանսպորտային միջոցների առևտրային

գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից առևտրային նպատակներով ձեռք բերված (ներմուծված) տրանսպորտային միջոցները՝ մինչև դրանց օտարումը կամ որպես հիմնական միջոց տվյալ տնտեսավարող սուբյեկտի սեփականություն ընդունելու մասին փաստաթուղթ կազմելը.

3) առանձին մասերից և պահեստամասերից հավաքված (բացառությամբ ինքնաշեն), ապակոմպլեկտավորված վիճակում գտնվող (այսինքն՝ արգելակային համակարգը և (կամ) ղեկային կառավարման համակարգը և (կամ) արտաքին լուսային սարքերը և (կամ) շարժիչը և (կամ) տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված թափքի կամ խցիկի դուռը և (կամ) շարժիչի ծածկոցն ապամոնտաժված կամ հանված), ինչպես նաև աջակողմյան տեղաբաշխմամբ ղեկային համակարգ ունեցող տրանսպորտային միջոցները.

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում գրանցված, հաշվառված և գրանցումից, հաշվառումից չհանված տրանսպորտային միջոցները (միայն սեփականության իրավունքի մասով):

(2-րդ կետը լրաց. 11.01.18 N 11-Ն, փոփ., լրաց. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

(հավելվածը լրաց. 21.04.11 N 618-Ն, փոփ. 23.02.17 N 177-Ն, լրաց. 11.01.18 N 11-Ն, 11.05.18 N 569-Ն, փոփ., լրաց. 26.09.19 N 1335-Ն, 25.02.21 N 263-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն, 06.11.25 N 1565-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձանց սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների պետական հաշվառման, տրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու և հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցների հաշվառումը վերականգնելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հաշվառման միջազգային վկայագիր տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով տրանսպորտային միջոցների հաշվառման գործողություններ են համարվում տրանսպորտային միջոցների (բացառությամբ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվածների)՝

1) հաշվառումը.

2) վերահաշվառումը.

3) հաշվառումից հանումը:

(2-րդ կետը փոփ. 23.02.17 N 177-Ն)

3. Հաշվառման գործողությունները, անկախ տրանսպորտային միջոցի կամ դրա սեփականատիրոջ հաշվառման վայրից, կատարվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչություն (այսուհետ՝ վարչություն) վարչական մասի և տարածքային հաշվառման-քննական բոլոր ստորաբաժանումների (այսուհետ՝ հաշվառման ստորաբաժանումներ) կողմից, ընդ որում, տրանսպորտային միջոցի օտարման կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի այլ փոփոխման դեպքերում տրանսպորտային միջոցը նախկին սեփականատիրոջ անվամբ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական գրանցումից և սույն կարգով սահմանված կարգով հաշվառումից հանվում է նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցելու հետ միաժամանակ՝ նույն հաշվառման ստորաբաժանման կողմից:

(3-րդ կետը փոփ. 26.09.19 N 1335-Ն, 05.09.24 N 1419-Ն)

4. Տրանսպորտային միջոցները հաշվառվում են տրանսպորտային միջոցի սեփականատերերի անվամբ՝ բացառությամբ իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող, սակայն դրանց կողմից ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների (հիմնարկ, պետական մարմին, իրավաբանական անձ չհանդիսացող

կազմակերպություններ) կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների, որոնք հաշվառվում են դրանք շահագործող կազմակերպությունների անվանմամբ (բացի ֆիզիկական անձանցից՝ մյուս սուբյեկտները, այսուհետ՝ կազմակերպություններ), ինչպես նաև ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալությամբ տրվող տրանսպորտային միջոցների, որոնք հաշվառվում են վարձակալի անվամբ:

(4-րդ կետը փոփ. 26.09.19 N 1335-Ն)

5. Ֆիզիկական անձի անվամբ տրանսպորտային միջոցը հաշվառվում է

ըստ նրա՝ բնակչության պետական ռեգիստրում առկա հաշվառման վայրի: Բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու դեպքում տրանսպորտային միջոցը չի հաշվառվում, բացառությամբ ժամկետային ծառայության զինծառայողների, որոնց դեպքում տրանսպորտային միջոցը հաշվառվում է

ըստ նրանց՝ բնակչության պետական ռեգիստրում առկա վերջին հաշվառման վայրի:

(5-րդ կետը խմբ. 26.09.19 N 1335-Ն)

(5-րդ կետը (միայն անձի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու և (կամ) հանրային ծառայությունների համարանիշ հատկացված չլինելու կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք տրամադրված չլինելու հիմքով հաշվառման գործողությունների կատարումը մերժելու մասով) ուժի մեջ է մտնում 01.07.2020 թվականին՝ համաձայն 26.09.19 N 1335-Ն որոշման 2-րդ կետի:)

6. Կազմակերպության անվանմամբ տրանսպորտային միջոցը հաշվառվում է ըստ դրա գտնվելու վայրի, իսկ կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների տրանսպորտային միջոցները՝ կազմակերպության անվանմամբ՝ որպես գտնվելու վայր նշելով առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրը:

7. Անհատ ձեռնարկատերերին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում են որպես ֆիզիկական անձանց անվամբ հաշվառվող տրանսպորտային միջոցներ:

8. Հաշվառման ստորաբաժանումների իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են օժանդակել և աջակցություն ցույց տալ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին), ինչպես նաև հնարավորություն ընձեռել ծանոթանալու հաշվառման գործողությունների ընթացակարգին անմիջական առնչություն ունեցող իրավական ակտերին կամ փաստաթղթերին, իսկ հաշվառման գործողությունների կատարումը մերժելու դեպքում՝ նաև մերժելու մասին որոշումներ ընդունելու հիմքերին:

9. Եթե հաշվառման գործողություն կատարելու համար ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, ապա հաշվառման ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձը դրանք մատնացույց է անում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին)՝ հնարավորություն տալով համալրելու դրանք:

10. Հաշվառման գործողությունների կատարումը մերժվում է, եթե՝

1) տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված չէ (բացառությամբ հաշվառումից հանելու դեպքերի).

2) տրանսպորտային միջոցն առանց իրավասու մարմնի տված թույլտվության վերասարքավորված է, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի կառուցվածքային տարրեր հանելով կամ տեղադրելով՝ առանց թափքի տեսակը փոփոխելու տրանսպորտային միջոցի տեսակի փոփոխության կամ հենասարքի, թափքի կամ կոնստրուկցիայի փոփոխման հետևանքով արտադրող գործարանի կողմից դրված նույնացման համարի կորստի (եթե հնարավոր չէ նույնականացնել տրանսպորտային միջոցը) կամ ամբողջական մասի, ագրեգատի կամ հանգույցի փոխարեն ոչ գործարանային միացման, կցման, զոդման եղանակով հավաքված մաս, ագրեգատ կամ հանգույց օգտագործված լինելու դեպքերում.

3) փաստաթղթերի բնօրինակների փոխարեն ներկայացված են դրանց՝ նոտարի կամ դրանք տված մարմնի կողմից չհաստատված պատճենները.

4) ներկայացված չեն տրանսպորտային միջոցը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման N 3 կամ N 5 հավելվածով նախատեսված փաստաթղթերը կամ անձը, որի անվամբ պետք է հաշվառվի տրանսպորտային միջոցը, հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրում և (կամ) չի հատկացվել հանրային ծառայությունների համարանիշ կամ չի տրամադրվել հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք.

5) առկա է տրանսպորտային միջոցի իրական և փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն կամ առկա են տրանսպորտային միջոցի կամ համարակիր ագրեգատների կամ հանգույցների (թափքի, հենասարքի, խցիկի, շարժիչի) նույնականացնող համարները թաքցնելու, կեղծելու, փոխարինելու կամ ոչնչացնելու հատկանիշներ, բացառությամբ շահագործման ընթացքում տրանսպորտային միջոցի մակնշավորման կամ համարակիր ագրեգատների կամ հանգույցների բնական մաշվածության, ժանգոտման, վերանորոգման կամ գողացված տրանսպորտային միջոցի վերադարձման փաստերի՝ նույնականացումն ապահովված լինելու դեպքերում.

6) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը կամ դրա սեփականատերը գտնվում է հետախուզման մեջ.

7) եթե օրենքով սահմանված կարգով տրանսպորտային միջոցի նկատմամբ կիրառված է արգելադրում.

8) մեկից ավելի սեփականատերերի առկայության դեպքում բացակայում է նրանց համաձայնությունը տրանսպորտային միջոցը նրանցից մեկի անվամբ հաշվառելու համար:

(10-րդ կետը խմբ. 26.09.19 N 1335-Ն)

(10-րդ կետը (միայն անձի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու և (կամ) հանրային ծառայությունների համարանիշ հատկացված չլինելու կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք տրամադրված չլինելու հիմքով հաշվառման գործողությունների կատարումը մերժելու մասով) ուժի մեջ է մտնում 01.07.2020 թվականին՝ համաձայն 26.09.19 N 1335-Ն որոշման 2-րդ կետի:)

10.1. Եթե հաշվառման ստորաբաժանում ներկայացված փաստաթղթերի վրա առկա են առերևույթ կեղծման հատկանիշներ կամ տեղեկություններ կան, որ ներկայացված փաստաթղթերը կեղծ են, ապա հաշվառման գործողության կատարումը կասեցվում և վերսկսվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

(10.1-ին կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն)

11. Հաշվառման գործողությունների կատարումը մերժվելու դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին), նրա ցանկությամբ, նույն օրը տրվում է հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին գրավոր վարչական ակտ (որոշում), որում նշվում է մերժման իրավական հիմքը։

II. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Տրանսպորտային միջոցը հաշվառվում է հաշվառման ստորաբաժանման «զննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) զննության կայանում՝

ա. ***(պարբերությունն ուժը կորցրել է 26.09.19 N 1335-Ն)***

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների և դրանց համարակիր մասերի շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որում նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը.

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները, և վճարման անդորրագրերը՝ մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) և տրանսպորտային միջոցը ձեռք բերող անձի (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով, և փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը՝ էլեկտրոնային առցանց հարցման եղանակով,

բ. հատկացվում են հերթական կամ վճարովի հաշվառման համարանիշեր (բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերի),

գ. հաշվառման տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան, և լրացվում է տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտ,

դ. հաշվառման համարանիշերը տրվում են սեփականատիրոջը (ներկայացուցչին)՝ բացառությամբ սույն կարգի 19-րդ կետով նախատեսված դեպքերի,

ե. վերադարձվում են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքումից հետո),

զ. փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահին համակարգչով տրվում է հաշվառման վկայագրի տպագրման պատվեր.

4) փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահում՝

ա. տպագրվում է հաշվառման վկայագիրը,

բ. սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է ստանալ հաշվառման վկայագիրը։

(12-րդ կետը փոփ., լրաց. 23.02.17 N 177-Ն, փոփ. 26.09.19 N 1335-Ն, լրաց. 10.03.22 N 308-Ն)

III. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Տրանսպորտային միջոցը վերահաշվառվում է տրանսպորտային միջոցի հաշվառման տվյալների (սեփականատիրոջ անձնագրային տվյալներից անվան, ազգանվան, ֆիզիկական անձանց հաշվառման վայրի կամ կազմակերպության գտնվելու վայրի կամ անվանման (առանց ՀՎՀՀ-ի փոփոխման), տրանսպորտային միջոցի թափքի կամ այլ համարակիր մասերի համարների), ինչպես նաև թափքի (խցիկի) գույնի կամ համարանիշերի փոփոխության կամ

տրանսպորտային միջոցի վերասարքավորման դեպքում:

(13-րդ կետը խմբ. 26.09.19 N 1335-Ն)

14. Ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների կամ հաշվառման վայրի կամ կազմակերպության անվանման (առանց ՀՎՀՀ-ի փոփոխման) կամ գտնվելու վայրի փոփոխության հետ կապված՝ տրանսպորտային միջոցի վերահաշվառման դեպքում հաշվառման համարանիշերը, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ցանկությամբ, կարող են չհանձնվել և հաշվառման ժամանակ չփոխանակվել:

(14-րդ կետը փոփ. 26.09.19 N 1335-Ն)

15. Տրանսպորտային միջոցը վերահաշվառվում է հաշվառման ստորաբաժանման «զննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ-փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) զննության կայանում՝

ա. ***(պարբերությունն ուժը կորցրել է 26.09.19 N 1335-Ն)***

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների ու դրանց համարակիր մասերի շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որում նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը.

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները, և վճարման անդորրագրերը՝ մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով, և փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը՝ էլեկտրոնային առցանց հարցման եղանակով,

բ. հատկացվում են հերթական կամ վճարովի հաշվառման համարանիշեր, եթե վերահաշվառման ժամանակ կատարվում է համարանիշերի փոփոխություն,

գ. վերահաշվառման տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան, և փոփոխություններ են կատարվում տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտում,

դ. անձի ցանկությամբ տպագրվում և հատկացվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական (եթե այն փոփոխվել է),

ե. հաշվառման համարանիշերը տրվում են սեփականատիրոջը (ներկայացուցչին), եթե հատկացվել են հաշվառման համարանիշեր,

զ. վերադարձվում են անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը և վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքումից հետո),

է. փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահին համակարգչով տրվում է հաշվառման վկայագրի տպագրման պատվեր.

4) փաստաթղթերի տպագրման և հատկացման սրահում՝

ա. տպագրվում է հաշվառման վկայագիրը,

բ. սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է ստանալ հաշվառման վկայագիրը:

(15-րդ կետը փոփ., լրաց. 23.02.17 N 177-Ն, 26.09.19 N 1335-Ն, լրաց. 10.03.22 N 308-Ն)

IV. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվում է՝

1) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոփոխության դեպքում.

2) տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու դեպքում.

3) տրանսպորտային միջոցի խոտանման դեպքում:

17. Տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվում է հաշվառման ստորաբաժանման «զննության կայան-վճարման վայր-սպասարկման սրահ» հոսքագծի եղանակով՝ հետևյալ ընթացակարգով՝

1) զննության կայանում՝

ա. ստուգվում են տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման փաստը կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթը,

բ. տրանսպորտային միջոցի իրական տվյալները համեմատվում են փաստաթղթային տվյալների հետ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման NN 3 և 5 հավելվածների 3-րդ կետերով

սահմանված դեպքերի),

գ. տրանսպորտային միջոցի տվյալները մուտքագրվում են համակարգչային շտեմարան, ստուգվում է տրանսպորտային միջոցի նույնացման համարի, թափքի և հենասարքի (ամրաշրջանակի) տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների ու դրանց համարակիր մասերի, ինչպես նաև սեփականատիրոջ տվյալների առկայությունը հետախուզման մեջ գտնվող անձանց շտեմարանում,

դ. տպագրվում է տրանսպորտային միջոցի տվյալների մասին արձանագրություն, որում նշվում են վճարման ենթակա տուրքերի և վճարների տեսակներն ու չափերը.

2) վճարման վայրում սեփականատիրոջ կողմից վճարվում են տուրքերն ու վճարները, և վճարման անդորրագրերը՝ մյուս փաստաթղթերի հետ միասին, ներկայացվում են սպասարկման սրահի աշխատողին.

3) սպասարկման սրահում՝

ա. ստուգվում են տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ներկայացուցչի) ինքնությունը՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի միջոցով, փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը՝ էլեկտրոնային առցանց հարցման եղանակով, և տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու իրավասությունը,

բ. հատկացվում են «տարանցիկ» («ժամանակավոր») համարանիշեր՝ բացառությամբ սույն կարգի 14-րդ կետում և 16-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերի, ինչպես նաև՝ այն դեպքերի, երբ, սեփականատիրոջ փոփոխությամբ պայմանավորված, տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվում է հաշվառման հետ միաժամանակ),

գ. հաշվառումից հանելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան, և փոփոխություններ են կատարվում տրանսպորտային միջոցի հաշվառման էլեկտրոնային քարտում,

դ. տպագրվում և հատկացվում է հաշվառումից հանելու մասին տեղեկանք,

ե. «տարանցիկ» («ժամանակավոր») համարանիշերը տրվում են հաշվառումից հանող անձին,

զ. վերադարձվում են անձը հաստատող փաստաթուղթը և վճարման անդորրագրերը («ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Է» բառով դրոշմակնքումից հետո), իսկ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու դեպքում՝ նաև հաշվառման վկայագիրը (դիմերեսի կողմից ներքևի ձախ և վերևի աջ անկյունները կտրված վիճակում սքանավորելուց և տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման (վերահաշվառման) համակարգչային շտեմարան մուտքագրելուց հետո):

(17-րդ կետը փոփ., լրաց., խմբ. 26.09.19 N 1335-Ն, լրաց. 10.03.22 N 308-Ն)

18. Հաշվառումից հանելիս, բացառությամբ սույն կարգի 14-րդ կետում նշված դեպքերի, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը հանձնվում են հաշվառման ստորաբաժանում, և դրանց փոխարեն տրվում են՝

1) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոփոխության դեպքում, երբ տրանսպորտային միջոցը հաշվառվելու է այլ մարմինների կողմից՝ «ժամանակավոր» համարանիշեր՝ 15 օր ժամկետով.

2) տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքից մշտապես արտահանելու դեպքում՝ «տարանցիկ» համարանիշեր՝ 30 օր ժամկետով:

(18-րդ կետը լրաց. 23.02.17 N 177-Ն)

19. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք ունեցող անձանց դեղին հիմնագույնի համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցներ օտարվելու դեպքում դեղին հիմնագույնի համարանիշերը, նախկին սեփականատիրոջ համաձայնությամբ, չեն հանձնվում հաշվառման ստորաբաժանում, իսկ ի պահ հանձնված հիմնական համարանիշերը համարվում են հանձնված:

(19-րդ կետը փոփ. 04.06.15 N 621-Ն)

V. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

20. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման ստորաբաժանում է հանձնում հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի սեփականատերը Հայաստանի Հանրապետությունում չէ, կամ նրա բնակության վայրը հայտնի չէ, տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը կարող է հանձնել ցանկացած շահագրգիռ անձ՝ հայտնելով սեփականատիրոջ կողմից դրանք չհանձնելու պատճառները:

21. Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու համար հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը չեն ներկայացվում, եթե՝

1) դատարանի որոշմամբ տրանսպորտային միջոցի օգտագործումն արգելված լինելու կամ իրավասու պետական մարմնի կողմից տրանսպորտային միջոցի օգտագործման նկատմամբ արգելանք կիրառված լինելու կամ տրանսպորտային միջոցի կալանքի տակ գտնվելու պատճառով տրանսպորտային միջոցը դուրս է սեփականատիրոջ (ներկայացուցչի) կամ շահագրգիռ անձի տիրապետումից.

2) հաշվառման վկայագիրը կամ հաշվառման համարանիշերը կորել են և այդ մասին առկա է Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ դրանց կորստյան փաստի վերաբերյալ հայտարարություն տալը հավաստող փաստաթուղթ:

(21-րդ կետը խմբ. 26.09.19 N 1335-Ն)

22. Տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների հաշվառման շտեմարան, և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) նրա ցանկությամբ տրվում է հաշվառումից ժամանակավոր հանելու մասին տեղեկանք:

(22-րդ կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն)

23. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելու համար հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելու մասին տեղեկանքը (եթե առկա է) և անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը:

(23-րդ կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն)

24. Հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելու տվյալները մուտքագրվում են տրանսպորտային միջոցների հաշվառման շտեմարան, և տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) վերադարձվում են հաշվառման վկայագիրն ու հաշվառման համարանիշերը (եթե դրանք հանձնվել են): Եթե հաշվառման վկայագիրը և (կամ) հաշվառման համարանիշերը չեն հանձնվել սույն կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պատճառով, ապա հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելու ժամանակ սույն կարգով սահմանված կարգով հատկացվում են նոր հաշվառման վկայագիր և (կամ) հաշվառման համարանիշեր:

(24-րդ կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն)

VI. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

25. Տրանսպորտային միջոցների հաշվառման միջազգային վկայագիր ստանալու համար անձը հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) հաշվառման վկայագիր.

3) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթ:

26. Տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագիր տալու համար հաշվառման ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձը տվյալները մուտքագրում է համակարգչային շտեմարան, լրացնում տրանսպորտային միջոցի հաշվառման միջազգային վկայագիր և այն նույն օրը տալիս տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին):

VII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Սեփականության իրավունքով մինչև 18 տարեկան կամ անգործունակ ճանաչված անձանց պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ նրանց օրինական ներկայացուցիչներից որևէ մեկի դիմումի հիման վրա:

(27-րդ կետը խմբ. 26.09.19 N 1335-Ն)

28. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված (ռեզիդենտ) դիվանագիտական առաքելություններին, միջազգային կազմակերպություններին, դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, այդ թվում՝ պատվավոր հյուպատոսների կողմից ղեկավարվող հյուպատոսական հիմնարկներին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում են այդ կազմակերպությունների անվանմամբ և հաշվառումից հանվում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված հայտի հիման վրա: Հայտի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հետ:

(28-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, 30.05.24 N 831-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

29. Դիվանագիտական գործակալներին պատկանող տրանսպորտային միջոցները հաշվառվում, վերահաշվառվում և հաշվառումից հանվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված հայտի հիման վրա, իսկ

դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմերի այլ անդամներին պատկանող տրանսպորտային միջոցները՝ փոխադարձության սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտի հիման վրա: Հայտի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հետ:

(29-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

29.1. Տրանսպորտային միջոցի փոխարեն վարչության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը սպասարկող հաշվառման ստորաբաժանման կողմից տրված՝ տրանսպորտային միջոցի տվյալների մասին տեղեկանքի հիման վրա այլ երկրի գրանցումից (հաշվառումից) հանված տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետությունում գրանցելիս (հաշվառելիս), որպես ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, հիմք են ընդունվում արտահանման երկրի իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերը:

(29.1-ին կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

29.2. Առանց նախապես Հայաստանի Հանրապետությունում գրանցումից (հաշվառումից) հանելու տրանսպորտային միջոցը այլ երկրում գրանցելու (հաշվառելու) հիմքով տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետությունում գրանցումից (հաշվառումից) հանելու համար տրանսպորտային միջոցը չի ներկայացվում հաշվառման ստորաբաժանում, և հիմք են ընդունվում՝

1) այլ երկրի իրավասու մարմնի կողմից տրված տրանսպորտային միջոցն այնտեղ գրանցված (հաշվառված) լինելու մասին փաստաթուղթը.

2) Հայաստանի Հանրապետության հաշվառման վկայագիրը և հաշվառման համարանիշերը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հաշվառման վկայագիրը և (կամ) հաշվառման համարանիշերը հանձնված լինելու մասին փաստաթուղթը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հայտարարություն, որ դրանք հանձնվել են՝ նախազգուշացումով, որ այդ դեպքում դրանց ապօրինի օգտագործմամբ կատարված արարքների համար պատասխանատվությունը կրելու է ինքը:

(29.2-րդ կետը լրաց. 26.09.19 N 1335-Ն)

30. Եթե տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ հաշվառման վկայագիրը տալ հաշվառման (վերահաշվառման) օրը, ապա տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ներկայացուցչին) տրվում է հաշվառման ժամանակավոր վկայագիր՝ մինչև մեկ ամիս ժամկետով, որը նա ցանկացած ժամանակ իրավասու է փոխելու հիմնական հաշվառման վկայագրով: Հաշվառման ժամանակավոր վկայագրի ժամկետը երկարաձգվում է՝ հաշվառման վկայագիրը մեկամսյա ժամկետում պատրաստ չլինելու դեպքում:

31. Հափշտակված տրանսպորտային միջոցները սեփականատիրոջ (ներկայացուցչի) գրավոր դիմումի և այդ փաստի առթիվ քրեադատավարական վարույթ հարուցելու մասին փաստաթղթի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա հաշվառումից ժամանակավոր հանվում են, և դրանց գրանցումը կասեցվում է:

(31-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, փոփ. 26.09.19 N 1335-Ն)

32. Սույն կարգի 31-րդ կետում նշված տրանսպորտային միջոցների հայտնաբերման դեպքում սեփականատիրոջ գրավոր դիմումի, տրանսպորտային միջոցը սեփականատիրոջը հանձնելու (հայտնաբերվելու) վերաբերյալ փաստաթղթի կամ հետախուզումը դադարեցնելու մասին փաստաթղթի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը և գրանցումն անվճար վերականգնվում են:

(32-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն)

33. Տրանսպորտային միջոցները խոտանելու դեպքում հաշվառումից հանելու համար սեփականատերը (ներկայացուցիչը) հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում՝

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ.

2) տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր.

3) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը.

4) փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա. հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռքբերման,

բ. սնանկության աճուրդով ձեռքբերման,

գ. հարկադիր էլեկտրոնային աճուրդից կամ սնանկության վարույթի աճուրդից գույքը պահանջատիրոջը կամ պարտատիրոջը հանձնման,

դ. բանկերի (վարկային կազմակերպությունների, գրավատների) կողմից արտադատական եղանակով բռնագանձման,

ե. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, այդ թվում՝ պատվավոր հյուպատոսների կողմից ղեկավարվող հյուպատոսական հիմնարկներին, ինչպես նաև դրանց դիվանագիտական կամ վարչատեխնիկական անձնակազմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամներին պատկանող տրանսպորտային միջոցների իրացման,

զ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և բորսաների կողմից օտարման:

(33-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն, լրաց. 30.05.24 N 831-Ն)

34. Ավտոմոբիլի զույգ համարանիշերի, մոտոցիկլի, տրիցիկլի, քվադրիցիկլի, մոպեդի

և կցորդի համարանիշերի կորստյան դեպքում տրանսպորտային միջոցը խոտանելու համար ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ դրանց կորստյան փաստի վերաբերյալ հայտարարություն տալը հավաստող փաստաթուղթ:

(34-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, 25.02.21 N 263-Ն)

35. Ավտոմոբիլի մեկ համարանիշի կամ հաշվառման վկայագրի կորստյան դեպքում դրա մասին նշում է կատարվում տրանսպորտային միջոցը խոտանելու մասին էլեկտրոնային գործում: Այդ դեպքում մեկ համարանիշի կամ հաշվառման վկայագրի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ խոտանումը մերժելու համար:

(35-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն)

VIII. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(գլուխը լրաց. 04.06.15 N 621-Ն)

36. Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հաշվառման համակարգչային շտեմարանները և էլեկտրոնային մատյանները պահպանվում են մշտական, իսկ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթը (ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացությունը), հաշվառման վկայագիրը, տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը, տրանսպորտային միջոցների տվյալների մասին տեղեկանքը, տրանսպորտային միջոցի վերասարքավորման կամ առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալու մասին որոշումները, ինչպես նաև տրանսպորտային միջոցի գրանցման կամ հաշվառման համար ներկայացված այլ փաստաթղթերը (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ստացված)՝ 1 տարի ժամկետով, որից հետո ենթակա են ոչնչացման:

(36-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն, փոփ., լրաց. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն)

37. Սույն կարգի 36-րդ կետում նշված պահպանման ժամկետը հաշվարկվում է փաստաթղթերը հաշվառման ստորաբաժանում մուտք լինելու օրվանից:

(37-րդ կետը լրաց. 04.06.15 N 621-Ն)

(հավելվածը փոփ. 16.12.10 N 1687-Ն, լրաց. 14.04.11 N 377-Ն, փոփ., լրաց. 21.04.11 N 618-Ն, 15.09.11 N 1378-Ն, փոփ., խմբ. 27.10.11 N 1512-Ն, խմբ. 15.03.12 N 306-Ն, փոփ., լրաց. 04.06.15 N 621-Ն, 23.02.17 N 177-Ն, փոփ., խմբ., լրաց. 26.09.19 N 1335-Ն, լրաց. 25.02.21 N 263-Ն, փոփ., լրաց. 10.03.22 N 308-Ն, լրաց. 30.05.24 N 831-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը, ներկայացուցիչը) հաշվառման գործողություններ կատարելու համար հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ սույն ցանկի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, և՝

1) անձը հաստատող փաստաթուղթ հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիր կամ նույնականացման քարտ կամ զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական,

բ. օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված) և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության

քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

գ. քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

դ. փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

ե. ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական,

զ. ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական).

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, եթե տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը գրանցված չէ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչությունում (այսուհետ՝ վարչություն).

3) օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի):

(1-ին կետը խմբ. 04.06.15 N 621-Ն, փոփ. 26.09.19 N 1335-Ն, խմբ. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

2. Բացի սույն ցանկի 1-ին կետում նշված փաստաթղթերից՝ ներկայացվում են նաև՝

1) ***(ենթակետն ուժը կորցրել է 26.09.19 N 1335-Ն)***

2) տրանսպորտային միջոցի վերահաշվառման դեպքում՝

ա. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,

բ. վերահաշվառման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ (բացառությամբ տրանսպորտային միջոցի գույնը կամ համարանիշերը փոխելու դեպքերի),

գ. ***(պարբերությունն ուժը կորցրել է 26.09.19 N 1335-Ն)***

դ. փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանք, եթե վերահաշվառումը կապված է հաշվառման հասցեի փոփոխության հետ և նոր հասցեն գտնվում է այլ համայնքի տարածքում.

3) տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու դեպքում՝

ա. տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,

բ. հաշվառման համարանիշեր:

(2-րդ կետը խմբ., փոփ., լրաց. 23.02.17 N 177-Ն, փոփ., լրաց. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն)

3. Տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում չի ներկայացվում՝

1) եթե առկա է տրանսպորտային միջոցը հաշվառման ստորաբաժանում ներկայացվելու խոչընդոտ (տրանսպորտային միջոցի փոխարեն ներկայացվում է վարչության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրն սպասարկող հաշվառման ստորաբաժանման կողմից տրված՝ տրանսպորտային միջոցի տվյալների մասին տեղեկանք).

2) տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված՝ հաշվառումից հանելու դեպքում.

3) տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անունը, ազգանունը կամ հաշվառման վայրը փոփոխվելու հետ կապված՝ հաշվառման գործողություններ կատարելու, ինչպես նաև կորած հաշվառման վկայագրի կամ կորած հաշվառման համարանիշի փոխարեն նորն ստանալու, հաշվառման համարանիշը կամ հաշվառման վկայագիրը փոխարինելու դեպքերում:

4) եթե տրանսպորտային միջոցն արդեն իսկ գրանցված է վարչությունում և տրանսպորտային միջոցի համարակիր ագրեգատների կամ թափքի (խցիկի) գույնի փոփոխություն չի կատարվել (տրանսպորտային միջոցի համարակիր ագրեգատների և թափքի (խցիկի) գույնի փոփոխություն կատարված չլինելու մասին որպես հիմք ընդունվում է սեփականատիրոջ հայտարարությունը):

(3-րդ կետը լրաց., փոփ. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 05.09.24 N 1419-Ն)

(հավելվածը փոփ. 21.04.11 N 618-Ն, 27.10.11 N 1512-Ն, խմբ. 15.03.12 N 306-Ն, 04.06.15 N 621-Ն, խմբ., փոփ., լրաց. 23.02.17 N 177-Ն, փոփ., լրաց., խմբ. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն, 05.09.24 N 1419-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցը գրանցելու դեպքում ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) անձը հաստատող փաստաթուղթ հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիր կամ նույնականացման քարտ կամ զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, իսկ մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր կամ ծննդյան վկայական,

բ. օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված) և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

գ. քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

դ. փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

ե. ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական,

զ. ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական).

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում ներկայացվում է ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացություն (Ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի համատեղ հրամանով).

3) սեփականատիրոջ տվյալների փոփոխության փաստը հավաստող փաստաթուղթ՝ անունը, ազգանունը կամ հայրանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը) փոխված լինելու դեպքում.

4) տարանցիկ կամ այլ հաշվառման համարանիշեր (եթե առկա են).

5) տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանք, եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել տրանսպորտային միջոցի համարակիր մասերի համարները կամ պարզել արտադրման տարեթիվը կամ շարժիչի հզորությունը.

6) փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանքը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա. հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռքբերման,

բ. սնանկության աճուրդով ձեռքբերման,

գ. հարկադիր էլեկտրոնային աճուրդից կամ սնանկության վարույթի աճուրդից գույքը պահանջատիրոջը կամ պարտատիրոջը հանձնման,

դ. բանկերի (վարկային կազմակերպությունների, գրավատների) կողմից արտադատական եղանակով բռնագանձման,

ե. դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, այդ թվում՝ պատվավոր հյուպատոսների կողմից ղեկավարվող հյուպատոսական հիմնարկներին, ինչպես նաև դրանց դիվանագիտական կամ վարչատեխնիկական անձնակազմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամներին պատկանող տրանսպորտային միջոցների իրացման,

զ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և բորսաների կողմից օտարման:

7) ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենան այլ ֆիզիկական անձանց օտարելու դեպքում, եթե ավտոմեքենան օտարվում է այն ձեռք բերելուց (սեփականության իրավունքի պետական գրանցումից) հետո 365 օրվա ընթացքում՝ սեփականության իրավունքի դադարումը գրանցելու համար վճարված պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը (պետական տուրքը էլեկտրոնային եղանակով վճարելու դեպքում փաստաթուղթը համարվում է ներկայացված, եթե առցանց եղանակով ստուգման արդյունքում տեղեկատվություն է ստացվում այդ մասին):

Սույն կետով նախատեսված դեպքերում ներկայացվում են դրանք հիմնավորող

համապատասխան փաստաթղթերը:

(1-ին կետը լրաց. 27.03.14 N 342-Ն, խմբ. 09.10.14 N 1096-Ն, 04.06.15 N 621-Ն, փոփ., լրաց., խմբ. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն, լրաց. 29.12.22 N 2096-Ն, 30.05.24 N 831-Ն)

(հավելվածը փոփ. 28.04.11 N 636-Ն, 27.10.11 N 1512-Ն, խմբ. 15.03.12 N 306-Ն, լրաց. 27.03.14 N 342-Ն, խմբ. 09.10.14 N 1096-Ն, 04.06.15 N 621-Ն, փոփ., լրաց., խմբ. 26.09.19 N 1335-Ն, փոփ. 10.03.22 N 308-Ն, լրաց. 29.12.22 N 2096-Ն, 30.05.24 N 831-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության
աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Տրանսպորտային միջոցի սեփականատերը (լիազորված անձը, ներկայացուցիչը) միաժամանակ տրանսպորտային միջոցը գրանցելու և հաշվառելու դեպքում հաշվառման ստորաբաժանում է ներկայացնում տրանսպորտային միջոցը՝ բացառությամբ սույն ցանկի 3-րդ կետով նախատեսված դեպքերի, և՝

1) անձը հաստատող փաստաթուղթ հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիր կամ նույնականացման քարտ կամ զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, իսկ մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր կամ ծննդյան վկայական,

բ. օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված) և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

գ. քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթուղթ՝ մշտական կացության քարտ կամ ժամանակավոր կացության քարտ կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր,

դ. փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

ե. ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական,

զ. ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական).

2) ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում ներկայացվում է ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ անկախ ավտոփորձագետի կողմից տրված եզրակացություն (ինքնաշեն տրանսպորտային միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի համատեղ հրամանով).

3) սեփականատիրոջ տվյալների փոփոխության փաստը հավաստող փաստաթուղթ՝ անունը, ազգանունը կամ հայրանունը (կազմակերպության դեպքում՝ անվանումը) փոխված լինելու դեպքում.

4) տարանցիկ կամ այլ հաշվառման համարանիշեր (եթե առկա են).

5) տրանսպորտային միջոցն արտադրող գործարանի ներկայացուցչության կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանք, եթե առանց տեխնիկական միջոցների կամ սարքավորումների հնարավոր չէ տեսնել կամ պարզել տրանսպորտային միջոցի համարակիր մասերի համարները կամ պարզել արտադրման տարեթիվը կամ շարժիչի հզորությունը.